ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱԿՑԻԶԱՅԻՆ ԴՐՈՇՄԱՆԻՇԵՐԻ ԵՎ ԴՐՈՇՄԱՊԻՏԱԿՆԵՐԻ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՊԵԿ-ԲՄԱՇՁԲ-17/1

<< 19 >> դեկտեմբերի 2017թ.

ք. Երևան

<< կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս << ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար Ա.Սահակյանի, որը գործում է << կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Էյ Էմ Փի Ջի Գրուպ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն՝ Ա.Թառոյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Հայաստանի Հանրապետության տարածքում արտադրված կամ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված «Ալկոհոլային խմիչք», «Ծխախոտ» տեսակի ակցիզային դրոշմանիշերի և դրոշմապիտակների տպագրության աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 2): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 2.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Պայմանագրի գինը կազմում է **4 526 160 000 (Չորս միլիարդ հինգ հարյուր քսանվեց միլիոն մեկ հարյուր վաթսուն հազար)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Կատարողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Պայմանագրի յուրաքանչյուր չափաբաժնից՝ **50** տոկոսը՝ Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար՝ Կատարողի կողմից կանխավճարի ապահովում/բանկային երաշխիք/ ներկայացնելու դեպքում, համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի 7.13 կետով

նախատեսված կնքվելիք համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի

Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրը կազմված է 16 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 և N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 18-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովման

փոխարինման դեպքում նաև նոր ապահովումը Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011054021
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար՝

Ա.Սահակյան

Կատարող
«Էյ Էմ Փի Ջի Գրուպ» ՍՊԸ
ք.Երևան, Չարենցի 25
«Արդշինբանկ» ՓԲԸ

Հ/Հ 2474900126603312
ՀՎՀՀ 01531784
«Էյ Էմ Փի Ջի Գրուպ» ՍՊԸ -ի տնօրեն՝

«19» դեկտեմբերի Հավելված N 1
2017թ. կնքված
ՊԵԿ-ԲՄԱԾՁԲ-17/1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	ժամկետը **
1	79821200/306	<<ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔ>> տեսակի ակցիզային դրոշմանիշի տպագրություն Տեխնիկական-բնութագիրը ներկայացված է ստորև	հատ	9.36	3837600000	41 000 000	Ներկայացված է տեխնիկական բնութագրում	
2	79821200/306	<<ԾԽԱԽՈՏ>> տեսակի ակցիզային դրոշմանիշի տպագրություն Տեխնիկական-բնութագիրը ներկայացված է ստորև	հատ	3.6	1116000000	310 000 000	Ներկայացված է տեխնիկական բնութագրում	
3	79821200/307	Պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների պոլիմերային թաղանթի հիմքով դրոշմապիտակի տպագրություն Տեխնիկական-բնութագիրը ներկայացված է ստորև	հատ	3.783	3026400000	800 000 000	Ներկայացված է տեխնիկական բնութագրում	

Պատվիրատու
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011054021
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար՝
Ա.Սահակյան

Կատարող
«Էյ Էմ Փի Ջի Գրուպ» ՍՊԸ
ք.Երևան, Չարենցի 25
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2474900126603312
[illegible]631784
«Էյ [illegible] ՍՊԸ -ի անունից՝
[illegible]

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի ակցիզային դրոշմանիշերի և դրոշմապիտակների տպագրական աշխատանքների հիմնական որակական բնութագրերը

Չափաբաժին-1

<<ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔ>> տեսակի ակցիզային դրոշմանիշի նկարագրությունը

CPV-79821200/306

Տպագրության մեթոդը՝

- Բարձր, ֆլեքսոգրաֆիկ կամ օֆսեթ-գլանային տպագրություն

Դրոշմանիշիչափսերը

- 15մմ x 80մմ

Դրոշմանիշի նկարագրությունը

- Դրոշմանիշի վրա պետք է տեղադրված լինի առնվազն երկու գույնի նախշանկարով խորքային ֆոնային ցանց (գիլյոշիրային ֆոն), միկրոչափերի տեքստեր.
- Դրոշմանիշի գույնը և վերջնական տեսքը (պարտադիր նշումները ու գրառումները և դրանց տեղաբաշխումը դրոշմանիշի վրա) հաստատում է պատվիրատուն.
- Դրոշմանիշի վրա պատկերված պատվիրատուի խորհրդանիշի գույներից մեկը պետք է պարունակի այնպիսի ներկ, որն երևա միայն ՈՒՄ լույսի ներքո.
- Դրոշմանիշերը պետք է պարունակի ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի ստորագրությունը և <<RA>> տառերը, որոնք պետք է երևան միայն ՈՒՄ լույսի ներքո.
- Յուրաքանչյուր դրոշմանիշ պետք է ունենա սերիա (բաղկացած հայերեն այբուբենի մեկ տառից) և անհատական համար (բաղկացած 10-անիշ թվից).
- Դրոշմանիշի համարակալումը պետք է իրականացվի կամ <<ինքջեթ>>կամ <<լազերջեթ>> եղանակով:

Դրոշմանիշի տարբեր հատվածներում պետք է տպագրվեն հետևյալ տեքստերը

Ներմուծման դեպքում՝

- <<ՀՀ ԿԱ ՊԵԿ>>
- <<ԱԿՑԻԶԱՅԻՆ ԴՐՈՇՄԱՆԻՇ>>
- <<ՆԵՐՄՈՒԾՈՒՄ>>
- <<ԱԼԿ. ԽՄԻՉՔ>>

Տեղական արտադրության դեպքում՝

- <<ՀՀ ԿԱ ՊԵԿ>>
- <<ԱԿՑԻԶԱՅԻ ՆԴՐՈՇՄԱՆԻՇ>>
- <<ՏԵՂԱԿԱՆ>>
- <<ԱԼԿ. ԽՄԻՉՔ>>

- Դրոշմանիշերի վրա կիրառել OVI /Optical Variable inks/ տեսակի պաշտպանիչ ներկ, որը կիրառվում է գրեթե բոլոր երկրների թղթադրամների վրա և անզեն աչքով տարբերակվում է բոլոր տեսակի ներկերից: Այն տարբեր անկյունների տակ տարբեր գույների երանգ է ստանում հանդիսանալով որպես պաշտպանիչ հատկություն:

Սոսինձը

Հատուկ սոսինձ բարձր կպչողունակությամբ, որը կբացառի կրկնակի օգտագործումը. Այն օգտագործվում է սննդամթերքի պիտակների արտադրության մեջ, չի պարունակում քաղցկեղածին նյութեր և թունաքիմիկատներ:

Ծրագրային ապահովում և էլեկտրոնային կոդ

Պատվիրատուի մոտ առկա տեխնիկական բնութագրին համապատասխան համակարգչային ծրագիր պետք է ներդնի Կատարողը, որն ապահովված կլինի անհրաժեշտ պաշտպանվածությամբ, որից տարբեր հասանելիության աստիճաններով պետք է օգտվեն Պատվիրատուն, ապրանքներ դրոշմավորող հարկ վճարողները, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում պատվիրատուի կողմից որոշված անձինք:

- Դրոշմանիշերը տրամադրվում են հարկ վճարողին՝ Պատվիրատուի պահեստից: Դրոշմանիշերը տրամադրելիս անհրաժեշտ տվյալները (դրոշմանիշի տեսակը, համարը, ստացողի անվանումը և այլն մուտքագրվում են համակարգ:
- Էլեկտրոնային համակարգը պետք է ապահովի հարկ վճարողի կողմից դրոշմավորված ապրանքների վերաբերյալ համապատասխան տվյալների (ապրանքի տեսակի անվանումը, քանակը, լիտրաժը,

դրոշմանիշի համարները, արտադրության ամսաթիվը, պիտանելիության ժամկետը) մուտքագրումը համակարգի շտեմարան:

• Յուրաքանչյուր դրոշմանիշ պետք է ունենա երկչափ 2D-կոդ, որը հնարավոր կլինի կարդալ Apple iOS, Android 7, Windows Mobile 8 օպերացիոն համակարգերից որևէ մեկով աշխատող համընդհանուր օգտագործման էլեկտրոնային մոբայլ սարքով (բջջային հեռախոս, iPad, ...), որն ունի տեսախցիկ և որում նախորոք ներբեռնվել է 2D-կոդի ընթերցման ծրագիր: 2D – կոդում ներառված տվյալների հիման վրա, սարքը անմիջապես ինտերնետ կապուղիով համակարգի սերվերին պետք է փոխանցի տվյալ ապրանքի համարանիշը, որի վերաբերյալ ստանա և արտապատկերի սարքի էկրանի վրա տվյալ ապրանքի համար համակարգի տվյալների շտեմարանում գրանցված համապատասխան տվյալները, մասնավորապես, արտադրող կամ ներմուծող կազմակերպության անվանումը, հասցեն, հարկային կոդը, ապրանքատեսակը, տարողությունը և այլն:

Կենտրոնական համակարգին ներկայացվող պահանջները

Համակարգի սերվերի վրա տեղադրված համակարգչային ծրագիրը պետք է պարունակի՝

• Ֆայլերի և հաշվետվությունների արխիվ

• Դերերի և հասանելիության կառավարման մոդուլ

• Ստանդարտ (նախապես ծրագրավորված) հաշվետվությունների մշակման մոդուլ

• Օգտվողների կողմից գործողությունների և ավտոմատ գործողությունների պատմության մոդուլ (իրադարձությունների մատյան)

• 2D կոդի ընթերցման սարքից ստացված հարցմանը համապատասխան, շտեմարանից փոխանցվող տվյալների ձևավորման մոդուլ

Համակարգի ներդրումից հետո Կատարողի կողմից պետք է իրականացվի ծրագրային ապահովման սպասարկում՝ 6 ամիս ժամկետով:

Իրավական պայմաններ

Կատարողի կողմից ներդրված և իր կողմից գործարկած համակարգը հանդիսանում են պատվիրատուի սեփականությունը:

Պոլիմերային թաղանթ

Դրոշմանիշը պետք է լինի ինքնասոսնձվող՝ պատրաստված պոլիմերային հիմքով, աջակցող թղթի վրա, բաղկացած լինի բազմակի պաշտպանիչ շերտերից:

Դրոշմանիշը պետք է լինի այնպիսին, որ այն փակցնելուց հետո բացառվի դրոշմապիտակը անվնաս պոկելու հնարավորությունը: Թաղանթի հաստությունը պետք է լինի այնքան, որ ապահովի հոսքագծերի վրա տեղադրված ավտոմատ պիտակավորման սարքերի բնականոն (անխափան) աշխատանքը: Դրոշմանիշը պետք է պարունակի բարձր պաշտպանվածությամբ օժտված հոլոգրաֆիկ թափանցիկ շերտ՝ դրոշմանիշի ամբողջ մակերեսով և պարունակի պատվիրատուի կողմից հաստատված տարբերանշաններ: Տպագրությունը պետք է կատարվի հոլոգրաֆիկ պատկերը հաջորդող՝ դրոշմանիշի ստորին շերտում: Կատարողը պարտավոր է Պատվիրատուի պահանջով աշխատանքի արդյունքի հանձնման ժամանակ ներկայացնել Միջազգային հոլոգրամ արտադրողների ասոցիացիայի (IHMA) անդամի հավաստագրի պատճենը:

Դրոշմանիշի շերտերը՝

1.////////////////	36 - 50 մկն պոլիէթիլենտերեֆտալատ(PET)
2.	HRI հոլոգրաֆիկ պաշտպանված շերտ
3.////////////////	Պաշտպանիչ տպագրություն
4.	Սոսինձ
5.////////////////	Աջակցող սիլիկոնապատթուղթ կամ սիլիկոնապատ թաղանթ

Տպագրական ներկին ներկայացվող պահանջները

• Դրոշմանիշերի արտադրության համար օգտագործվող տպագրական ներկը պետք է լինի դիմացկուն՝ լույսի, տաքության, խոնավության, կենցաղային քիմիկատների և այն լուծիչների նկատմամբ, որոնք վտանգում են դրոշմանիշի ամբողջականությունը՝ վերջինիս շրջանառության ընթացքում: Տպագրական ներկը պետք է լինի դիմացկուն լվացման, քիմիական մաքրման և քրտնելու նկատմամբ: Բացի այդ նրանք պետք է ապահովեն բավականաչափ բարձր մակարդակի պաշտպանություն՝ կեղծ դրոշմանիշերը հայտնաբերող լուծիչների դեմ:

Դրոշմանիշերի փաթեթավորման պայմանները

• Դրոշմանիշերի մատակարարումը կատարվում է գլանափաթեթային (բաբիններով)՝ 5000-ից մինչև 10000 հատ դրոշմանիշով յուրաքանչյուր գլանում (բաբինում):

• Գլանափաթեթները պետք է փաթեթավորված լինեն տուփերում, 10-ից մինչև 20 հատ յուրաքանչյուր տուփում:

• Տուփերը պետք է փաթեթավորված լինեն պալետներում,
• Պալետը և իր պարունակությունը պետք է փաթեթավորված լինեն պոլիէթիլենային թաղանթով:

Դրոշմանիշերի քանակը և ընդունման ժամանակացույցը

Քանակը՝ **41 000 000** (քառասունմեկ միլիոն) հատ, ընդ որում՝

- առնվազն 11 000 000 հատ՝ իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա՝ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 120 օրացուցային օրվա ընթացքում,
- առնվազն 15 000 000 հատ՝ իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա՝ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 130 օրացուցային օրվա ընթացքում,
- 15 000 000 հատ՝ իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա՝ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 150 օրացուցային օրվա ընթացքում:

Դրոշմապիտակների դիմաց վճարումներն իրականացվելու են ըստ Պատվիրատուի կողմից ընդունված խմբաքանակների:

Մատակարարման պայմանները

Մատակարարումը պետք է իրականացվի հետևյալ հասցեով՝ ՀՀ, ք.Երևան 15, Մ. Խորենացու-3:

Պատվերի առաջին խմբաքանակի հետ միասին Կատարողը պետք է տրամադրի դրոշմանիշերի 50 ուղեցույց (բուկլետներ) պաշտպանական շերտերի վերաբերյալ:

Հրավերի նախագծով նախատեսել <<Ալկոհոլային խմիչք>> տեսակի ակցիզային դրոշմանիշերի տպագրության համար համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում Կատարողին 50% կանխավճարի հատկացում, Կատարողի կողմից բանկային երաշխիք ներկայացնելու դեպքում:

Կատարողը պարտավոր է մինչև աշխատանքի արդյունքի 1-ին խմբաքանակի հանձնումը Պատվիրատուին՝ իր միջոցների հաշվին իրականացնել <<Ալկոհոլային խմիչք>> տեսակի ակցիզային դրոշմանիշերի նմուշի փորձաքննություն:

Գնման գործընթացը կազմակերպվում է ''Գնումների մասին'' ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա:

Չափաբաժին-2

<<ԾԽԱԽՈՏ>> տեսակի ակցիզային դրոշմանիշի նկարագրությունը

CPV-79821200/306

Թղթին ներկայացվող տեխնիկական պահանջները

Թղթի տեսակը՝ ոչ ինքնասոսնձվող

Ոչ ինքնասոսնձվող թղթի հատկանիշները	
Կազմը	100 % ցելյուլոզ
Հիմքի քաշը	70 գ/քառ.մ (+ - 2գ/քառ. մ)
Հաստությունը	75-85 միկրոն
Անթափանցիկությունը	մինիմում 87 %
Ջրի ներծծում	20 գ/քառ.մ
Յուղի ներծծում	30 գ/քառ.մ
Պաշտպանական հատկանիշներ	Առնվազն 2 գույնի, թղթի հետ ինտեգրացված մանրաթելեր, որոնք տեսանելի են միայն ՈՒՄ լույսի ներքո

Տպագրության մեթոդը

• Օֆսեթ, բարձր կամ ֆլեքսո տպագրություն

Դրոշմանիշի չափսերը

• 20մմ x 44մմ

Դրոշմանիշի նկարագրությունը

• Տպագրությունը կատարվում է մեկ կողմի վրա, հակառակ կողմի վրա տպագրություն չի կատարվում.

• Դրոշմանիշի վրա պետք է տեղադրված լինի երկգույն նախշանկարով խորքային ֆոնային ցանց (գիլյոշիրային ֆոն), ինչպես նաև խոշորացման դեպքում ամբողջությամբ ընթեռնելի միկրոշրիֆտով գրառված տեքստ: Միկրոշրիֆտի առավելագույն չափը (տառերի բարձրությունը) կարող է կազմել 200 մկմ.

• Դրոշմանիշի գույնը և վերջնական տեսքը (պարտադիր նշումները ու գրառումները և դրանց տեղաբաշխումը դրոշմանիշի վրա) հաստատում է պատվիրատուն.

• Դրոշմանիշի վրա պատկերված պատվիրատուի խորհրդանիշի գույներից մեկը պետք է պարունակի այնպիսի ներկ, որն երևա միայն ՈՒՄ լույսի ներքո.

• Դրոշմանիշերը պետք է պարունակի ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի ստորագրությունը և <<RA>> տառերը, որոնք պետք է երևան միայն ՈՒՄ լույսի ներքո.

• Յուրաքանչյուր դրոշմանիշ պետք է ունենա 2-D կոդ և անհատական համար բաղկացած հայերեն այբուբենի մեկ տառից և 10-անիշ թվից, որոնք պետք է լավ տեսանելի լինեն.

<u>Դրոշմանիշի տարբեր հատվածներում պետք է տպագրվեն հետևյալ տեքստերը</u>

Ներմուծման դեպքում՝

- <<ՀՀ ԿԱ ՊԵԿ>>
- <<ԱԿՑԻԶԱՅԻՆ ԴՐՈՇՄԱՆԻՇ>>
- <<ՆԵՐՄՈՒԾՈՒՄ>>
- <<ԾԽԱԽՈՏ>>

Տեղական արտադրության դեպքում՝

- <<ՀՀ ԿԱ ՊԵԿ>>
- <<ԱԿՑԻԶԱՅԻՆ ԴՐՈՇՄԱՆԻՇ>>
- <<ՏԵՂԱԿԱՆ>>
- <<ԾԽԱԽՈՏ>>

• Դրոշմանիշը պետք է պարունակի հոլոգրաֆիկ պատկեր (ժապավեն 6 մմ լայնությամբ և 20 մմ երկարությամբ՝ դրոշմանիշի չափսերին համապատասխան), որը իր հերթին կպարունակի Հարկային և Մաքսային զիննշանները ու այլ պաշտպանիչ էլեմենտներ և չպետք է կիրառվի այլ դեպքերում: Կատարողը պարտավոր է Պատվիրատուի պահանջով աշխատանքի արդյունքի հանձնման ժամանակ ներկայացնել Միջազգային հոլոգրամ արտադրողների ասոցիացիայի (IHMA) անդամի հավաստագրի պատճենը:

• Դրոշմանիշերի վրա կիրառել OVI /Optical Variable inks/ տեսակիպաշտպանիչներկ, որը կիրառվում է գրեթե բոլոր երկրների թղթադրամների վրա և անզեն աչքով տարբերակվում է բոլոր տեսակի ներկերից: Այն տարբեր անկյունների տակ տարբեր գույների երանգ է ստանում և ձեռքի շոշոփումով հեշտ տարբերակվում է հանդիսանալով որպես պաշտպանիչ հատկություն:

<u>Ծրագրային ապահովում և էլեկտրոնային կոդ</u>

Պատվիրատուի մոտ առկա տեխնիկական բնութագրին համապատասխան համակարգչային ծրագիր պետք է ներդնի Կատարողը, որն ապահովված կլինի անհրաժեշտ պաշտպանվածությամբ, որից տարբեր հասանելիության աստիճաններով պետք է օգտվեն Պատվիրատուն, ապրանքներ դրոշմավորող հարկ վճարողները, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում պատվիրատուի կողմից որոշված անձինք:

• Դրոշմանիշերը տրամադրվում են հարկ վճարողին՝ Պատվիրատուի պահեստից: Դրոշմանիշերը տրամադրելիս անհրաժեշտ տվյալները (դրոշմանիշի տեսակը, համարը, ստացողի անվանումը և այլն մուտքագրվում են համակարգ:

• Էլեկտրոնային համակարգը պետք է ապահովի հարկ վճարողի կողմից դրոշմավորված ապրանքների վերաբերյալ համապատասխան տվյալների (ապրանքի տեսակի անվանումը, ֆիլտրով, առանց ֆիլտր, տուփերի տարողությունը, քանակը, դրոշմանիշի համարները, արտադրության ամսաթիվը, պիտանելիության ժամկետը) մուտքագրումը համակարգի շտեմարան:

• Յուրաքանչյուր դրոշմանիշ պետք է ունենա երկչափ 2D-կոդ, որը հնարավոր կլինի կարդալ Apple iOS, Android 7, Windows Mobile 8 օպերացիոն համակարգերից որևէ մեկով աշխատող համընդհանուր օգտագործման էլեկտրոնային մոբայլ սարքով (բջջային հեռախոս, iPad, ...), որն ունի տեսախցիկ և որում նախորոք ներբեռնվել է 2D-կոդի ընթերցման ծրագիր: 2D – կոդում ներառված տվյալների հիման վրա, սարքը անմիջապես ինտերնետ կապուղիով համակարգի սերվերին պետք է փոխանցի տվյալ ապրանքի համարանիշը, որի վերաբերյալ ստանա և արտապատկերի սարքի էկրանի վրա տվյալ ապրանքի համար համակարգի տվյալների շտեմարանում գրանցված համապատասխան տվյալները, մասնավորապես, արտադրող կամ ներմուծող կազմակերպության անվանումը, հասցեն, հարկային կոդը, ապրանքատեսակը, տարողությունը և այլն:

<u>Կենտրոնական համակարգին ներկայացվող պահանջները</u>

Համակարգի սերվերի վրա տեղադրված համակարգչային ծրագիրը պետք է պարունակի՝

• Ֆայլերի և հաշվետվությունների արխիվ
• Դերերի և հասանելիության կառավարման մոդուլ
• Ստանդարտ (նախապես ծրագրավորված) հաշվետվությունների մշակման մոդուլ

• Օգտվողների կողմից գործողությունների և ավտոմատ գործողությունների պատմության մոդուլ (իրադարձությունների մատյան)

• 2D կոդի ընթերցման սարքից ստացված հարցմանը համապատասխան, շտեմարանից փոխանցվող տվյալների ձևավորման մուդուլ

Համակարգի ներդրումից հետո Կատարողի կողմից պետք է իրականացվի ծրագրային ապահովման սպասարկում՝ 6 ամիս ժամկետով:

Իրավական պայմաններ

Կատարողի կողմից ներդրված և իր կողմից գործարկած համակարգը հանդիսանում են պատվիրատուի սեփականությունը:

Տպագրական ներկին ներկայացվող պահանջները

• Դրոշմանիշերի արտադրությանհամար օգտագործվող տպագրական ներկը պետք է լինի դիմացկուն լույսի, տաքության, խոնավության, կենցաղային քիմիկատների և լուծիչների նկատմամբ, ինչպես նաև այն վնասակար նյութերի նկատմամբ, որոնք վտանգում են դրոշմանիշին իր շրջանառության ընթացքում: Տպագրական ներկը պետք է լինի դիմացկուն լվացման, քիմիական մաքրման, քրտնելու նկատմամբ: Բացի այդ նրանք պետք է նաև ապահովեն բավականաչափ բարձր մակարդակի պաշտպանություն կեղծ դրոշմանիշերի համար օգտագործվող լուծիչների դեմ:

Դրոշմանիշերի փաթեթավորման պայմանները

Դրոշմանիշերը պետք է մատակարարվեն չկտրտված վիճակով՝ թերթերով, որոնք կպարունակեն 100 կամ 200 դրոշմանիշ:

Դրոշմանիշերի քանակը և ընդունման ժամանակացույցը

Քանակը՝ **310 000 000** (երեք հարյուր տաս միլիոն) հատ, ընդ որում՝

- առնվազն 60 000 000 հատ՝ իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա՝ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 90 օրացուցային օրվա ընթացքում,

- առնվազն 90 000 000 հատ՝ իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա՝ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 120 օրացուցային օրվա ընթացքում,

- 160 000 000 հատ՝ իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա՝ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 150 օրացուցային օրվա ընթացքում:

Դրոշմապիտակների դիմաց վճարումներն իրականացվելու են ըստ Պատվիրատուի կողմից ընդունված խմբաքանակների:

Մատակարարման պայմանները

Մատակարարումը պետք է իրականացվի հետևյալ հասցեով՝ ՀՀ, ք. Երևան 15, Մ. Խորենացու-3:

Պատվերի առաջին խմբաքանակի հետ միասին Կատարողը պետք է տրամադրի դրոշմանիշերի 50 ուղեցույց (բուկլետներ) պաշտպանական շերտերի վերաբերյալ:

Հրավերի նախագծով նախատեսել <<Ծխախոտ>> տեսակի ակցիզային դրոշմանիշերի տպագրության համար համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում Կատարողին 50% կանխավճարի հատկացում, Կատարողի կողմից բանկային երաշխիք ներկայացնելու դեպքում:

Կատարողը պարտավոր է մինչև աշխատանքի արդյունքի 1-ին խմբաքանակի հանձնումը Պատվիրատուին՝ իր միջոցների հաշվին իրականացնել <<ԾԽԱԽՈՏ>> տեսակի ակցիզային դրոշմանիշի նմուշի փորձաքննություն:

* Տեխնիկական բնութագրում որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին օգտագործումը պարունակում է նաև <<կամ համարժեք>> բառերը:

Գնման գործընթացը կազմակերպվում է ''Գնումների մասին'' ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա:

Չափաբաժին-3
Պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների պոլիմերային թաղանթի հիմքով դրոշմապիտակի նկարագրությունը
CPV-79821200/307

1.Դրոշմապիտակների նկարագրությունը

• Դրոշմապիտակի գրառումները՝

- ապրանքի ծագումը՝ <<ՏԵՂԱԿԱՆ>>, <<ՆԵՐՄՈՒԾՈՒՄ>>,
- համարակալումը՝ սերիա (բաղկացած հայերեն այբուբենի մեկ տառից) և անհատական համար (բաղկացած 10-անիշ թվից),

• Որպես պաշտպանական հատկանիշ դրոշմապիտակը պետք է պարունակի նաև անզեն աչքով չերևացող գրառումներ, որոնք պետք է երևան միայն ուլտրամանուշակագույն լույսի ներքո:

• Դրոշմապիտակի գույնը, տեսքը, այլ պատկերային տարրերը, ինչպես նաև ուլտրամանուշակագույն լույսի ներքո երևացող գրառումները պատվիրատուի կողմից կներկայացվեն պայմանագրի կնքումից հետո՝ տասնօրյա ժամկետում:

• Դրոշմապիտակի վրա պետք է տեղադրված լինի առնվազն երկու գույնի նախշանկարով խորքային ֆոնային ցանց (գիլյոշիրային ֆոն), միկրո չափերի տեքստեր:

2.Դրոշմապիտակի չափերը

• 13 մմ x 17 մմ

3. Տպագրության մեթոդը՝

• Բարձր, ֆլեքսոգրաֆիկ կամ օֆսեթ-գլանային տպագրություն

4.Սոսինձը

Հատուկ սոսինձ բարձր կպչողունակությամբ, որը կբացառի կրկնակի օգտագործումը. այն օգտագործվում է սննդամթերքի պիտակների արտադրության մեջ, չի պարունակում քաղցկեղածին նյութեր և թունաքիմիկատներ:

5. Ծրագրային ապահովում և էլեկտրոնային կոդ

Պատվիրատուի մոտ առկա տեխնիկական բնութագրին համապատասխան համակարգչային ծրագիր պետք է ներդնի Կատարողը, որն ապհովված կլինի անհրաժեշտ պաշտպանվածությամբ, որից տարբեր հասանելիության աստիճաններով պետք է օգտվեն Պատվիրատուն, ապրանքներ դրոշմավորող հարկ վճարողները, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում պատվիրատուի կողմից որոշված անձինք:

• Հարկ վճարողները դրոշմապիտակ ստանալու համար ներկայացնում են էլեկտրոնային հայտ: Պատվիրատուի կողմից դրական եզրակացության դեպքում հանձնարարագրի (ծանուցման) հիման վրա դրոշմապիտակները տրամադրվում են հարկ վճարողին՝ պատվիրատուի պահեստից: Դրոշմապիտակները տրամադրելիս անհրաժեշտ տվյալները (պիտակի տեսակը, համարը, ստացողի անվանումը, ամսաթիվը, և այլն մուտքագրվում են համակարգ:

• Էլեկտրոնային համակարգը պետք է ապահովի հարկ վճարողի կողմից դրոշմավորված ապրանքների վերաբերյալ համապատասխան տվյալների մուտքագրումը համակարգի շտեմարան (ապրանքի տեսակի անվանումը (ապրանքային նշանը), քանակը, լիտրաժը, դրոշմապիտակի համարները, արտադրության ամսաթիվը, պիտանելիության ժամկետը):

• Յուրաքանչյուր դրոշմապիտակ պետք է ունենա երկչափ 2D-կոդ, որը հնարավոր կլինի կարդալ Apple iOS, Android 4, Windows Mobile 8 օպերացիոն համակարգերից որևէ մեկով աշխատող համընդհանուր օգտագործման էլեկտրոնային մոբիլ սարքով (բջջային հեռախոս, iPad, ...), որն ունի տեսախցիկ և որում նախօրոք ներբեռնվել է 2D-կոդի ընթերցման ծրագիր: 2D - կոդում ներառված տվյալների հիման վրա (տվյալները պետք է պարունակեն համակարգի URL հասցեն) սարքը անմիջապես ինտերնետ կապուղիով համակարգի սերվերին պետք է փոխանցի տվյալ ապրանքի համարանիշը, որի վերաբերյալ ստանա և արտապատկերի սարքի էկրանի վրա տվյալ ապրանքի համար համակարգի տվյալների շտեմարանում գրանցված համապատասխան տվյալները, մասնավորապես, արտադրող կամ ներմուծող կազմակերպության անվանումը, հասցեն, հարկային կոդը, ապրանքատեսակը, տարողությունը և այլն:

Կենտրոնական համակարգին ներկայացվող պահանջները

Համակարգի սերվերի վրա տեղադրված համակարգչային ծրագիրը պետք է պարունակի՝

• Ֆայլերի և հաշվետվությունների արխիվ
• Դերերի և հասանելիության կառավարման մոդուլ
• Օգտվողների ստուգման և նույնականացման մոդուլ
• Համակարգի կարգավորման մոդուլ (համակարգի պարամետրեր՝ հաշվետվությունների ստեղծման պարբերականության նշանակման, ապրանքանիշերի համարների վավերականության մասին հարցումներ ուղարկողների ցուցակ և այլն)

• Ստանդարտ (նախապես ծրագրավորված) և ոչ ստանդարտ հաշվետվությունների մշակման մոդուլ

• Օգտվողների կողմից գործողությունների և ավտոմատ գործողությունների պատմության մոդուլ (իրադարձությունների մատյան)

• 2D կոդի ընթերցման սարքից ստացված հարցմանը համապատասխան, շտեմարանից փոխանցվող տվյալների ձևավորման մուդուլ

• Համակարգի ներդրումից հետո Կատարողի կողմից պետք է իրականացվի ծրագրային ապահովման սպասարկում՝ 6 ամիս ժամկետով:

Համակարգի մշակման և ներդրման ժամկետն է՝ այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա՝ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրացուցային օրվա ընթացքում:

6.Պոլիմերային թաղանթ

Դրոշմապիտակը պետք է լինի ինքնասոսնձվող՝ պատրաստված պոլիմերային հիմքով, աջակցող թղթի վրա, բաղկացած լինի բազմակի պաշտպանիչ շերտերի:

Դրոշմապիտակի պետք է լինի այնպիսին, որ այն փակցնելուց հետո բացառվի դրոշմապիտակը անվնաս պոկելու հնարավորությունը: Թաղանթի հաստությունը պետք է լինի այնքան, որ ապահովի հոսքագծերի վրա տեղադրված ավտոմատ պիտակավորման սարքերի բնականոն (անխափան) աշխատանքը: Դրոշմապիտակը պետք է պարունակի բարձր պաշտպանվածությամբ օժտված հոլոգրաֆիկ թափանցիկ շերտ՝ պիտակի ամբողջ մակերեսով և պարունակի պատվիրատուի կողմից հաստատված տարբերանշաններ: Տպագրությունը պետք է կատարվի հոլոգրաֆիկ պատկերը հաջորդող՝ դրոշմապիտակի ստորին շերտում: Կատարողը պարտավոր է Պատվիրատուի պահանջով աշխատանքի արդյունքի հանձնման ժամանակ ներկայացնել Միջազգային հոլոգրամ արտադրողների ասոցիացիայի (IHMA) անդամի հավաստագրի պատճենը:

Դրոշմապիտակը պետք է պատված լինի պոլիէթիլենային շերտով:

Դրոշմապիտակի շերտերը՝

1.////////////////	36 - 50 մկմ պոլիէթիլեն տերեֆտալատ
2.	HRI հոլոգրաֆիկ պաշտպանված շերտ
3.////////////////	Պաշտպանիչ տպագրություն
4.	Սոսինձ
5.////////////////	Աջակցող սիլիկոնապատ թուղթ կամ սիլիկոնապատ թաղանթ

7. Տպագրական ներկին ներկայացվող պահանջները

• Դրոշմապիտակների արտադրության համար օգտագործվող տպագրական ներկը պետք է լինի դիմացկուն՝ լույսի, տաքության, խոնավության, կենցաղային քիմիկատների և այն լուծիչների նկատմամբ, որոնք վտանգում են դրոշմապիտակի ամբողջականությունը՝ վերջինիս շրջանառության ընթացքում: Տպագրական ներկը պետք է լինի դիմացկուն լվացման, քիմիական մաքրման և քրտնելու նկատմամբ: Բացի այդ նրանք պետք է ապահովեն բավականաչափ բարձր մակարդակի պաշտպանություն՝ կեղծ դրոշմապիտակները հայտնաբերող լուծիչների դեմ:

8.Դրոշմապիտակների փաթեթավորման և ընդունման(մատակարարման) պայմանները

• դրոշմապիտակների մատակարարումը կատարվում է գլանափաթեթային (բաբիններով)՝ յուրաքանչյուր գլանում 20 000-ից մինչև 40 000 հատ դրոշմապիտակով:

• Գլանափաթեթները պետք է փաթեթավորված լինեն տուփերում,

• Տուփերը պետք է փաթեթավորված լինեն պալետներում,

• Պալետը և իր պարունակությունը պետք է փաթեթավորված լինեն պոլիէթիլենային թաղանթով:

• Դրոշմապիտակները պատվիրատուի կողմից ընդունվում են ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի պահեստ:

9. Դրոշմապիտակների քանակը և ընդունման ժամանակացույցը

Քանակը՝ **800 000 000** (ութ հարյուր միլիոն) հատ, ընդ որում՝

- առնվազն 200,0 մլն.հատ՝ իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա՝ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրացուցային օրվա ընթացքում:

- առնվազն 200,0 մլն.հատ՝ իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա՝ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 50 օրացուցային օրվա ընթացքում:

- առնվազն 200,0 մլն.հատ՝ իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա՝ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 70 օրացուցային օրվա ընթացքում:

- 200,0 մլն.հատ՝ իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա՝ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 90 օրացուցային օրվա ընթացքում:

Դրոշմապիտակների դիմաց վճարումներն իրականացվելու են ըստ Պատվիրատուի կողմից ընդունված խմբաքանակների:

Պատվերի առաջին խմբաքանակի հետ միասին Կատարողը պետք է տրամադրի դրոշմանիշերի 100 ուղեցույց (բուկլետներ) պաշտպանական շերտերի վերաբերյալ:

Հրավերի նախագծով նախատեսել համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում Կատարողին 50% կանխավճարի հատկացում, Կատարողի կողմից բանկային երաշխիք ներկայացնելու դեպքում:

Կատարողը պարտավոր է մինչև աշխատանքի արդյունքի 1-ին խմբաքանակի հանձնումը Պատվիրատուին՝ իր միջոցների հաշվին իրականացնել դրոշմապիտակների նմուշի փորձաքննություն:

* Տեխնիկական բնութագրում որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին օգտագործումը պարունակում է նաև <<կամ համարժեք>> բառերը:

<u>Գնման գործընթացը կազմակերպված ''Գնումների մասին'' ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա:</u>

Պատվիրատու
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011054021
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար՝

Ա.Սահակյան

Կատարող
«Էյ Էմ Փի Ջի Գրուպ» ՍՊԸ
ք.Երևան, Չարենցի 25
«Արդշինբանկ» ՓԲԸ

Հ/Հ 2474900126603312
ՀՎՀՀ 01531784
«Էյ Էմ Փի Ջի Գրուպ» ՍՊԸ -ի տնօրեն՝

Ա.Թառոյան

Հավելված 2
«19» դեկտեմբերի 2017թ. կնքված
ՊԵԿ-ԲՄԱՇՁԲ-17/1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱՄԱՆ-ԸՆԴՈՒՆԱՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ՝ «____» «_____» 20 թ. Դուրս գրված N հաշիվ-ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքի							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 2.1
«19» դեկտեմբերի 2017թ. կնքված
ՊԵԿ-ԲՄԱՇՁԲ-17/1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն